



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2020 թվականի դեկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումը:

2020 թվականի դեկտեմբերի 8-ի «Գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և դատական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ թիվ ԵԴ/0496/01/20 քրեական գործով կիրառման ենթակա՝ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականությունը որոշելու համար:

Դիմողն արձանագրում է, որ Օրենսգրքի 376¹-րդ հոդվածի 8-րդ կետի և 31-րդ հոդվածի 3-րդ մասի համադրված վերլուծությունից բխում է, որ գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության

մասնակցի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման:

Ըստ դիմողի, վերը նշված պայմաններում անխուսափելի է դառնում վերաքննիչ դատարանի կողմից նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատումը: Բացի դրանից, վերաքննիչ դատարանը կարող է չարդարացված կերպով սահմանափակել առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը և ըստ էության միջամտել առաջին ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության բնականոն ընթացքին: Այս առումով, դիմողը հատկանշական է համարում այն, որ վերաքննիչ բողոքի քննության ընթացքում հիմնական քրեական գործը շարունակելու է գտնվել առաջին ատյանի դատարանի վարույթում և վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը կարող է ուղղակիորեն ազդել հիմնական քրեական գործի քննության բնականոն ընթացքի վրա:

Դիմողը գտնում է նաև, որ եթե առաջին ատյանի դատարանը կայացրած լինի գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու մասին որոշում, իսկ վերաքննիչ դատարանն անհամաձայնություն հայտնի այդ որոշմանը, ապա վերաքննիչ դատարանը պետք է Սահմանադրական դատարան դիմի մի գործով, որը գտնվում է ոչ թե իր, այլ առաջին ատյանի դատարանի վարույթում, մինչդեռ՝ առաջին ատյանի դատարանի նման որոշման պարագայում դատավարության մասնակիցը չի զրկվում այդ որոշման հետաձգված բողոքարկման հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալը, դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ այնքանով, որքանով նախատեսում են գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ բողոքարկման հնարավորություն, առերևույթ հակասում են Սահմանադրության 164, 168 և 169-րդ հոդվածների պահանջներին:

2. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և

3-րդ մասերի պահանջները, և առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով** կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով: Վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանները կարող են դիմել Սահմանադրական դատարան **համապատասխան գործով վարույթը սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը, ...:**

Մեջբերված դրույթների բովանդակությունից բխում է, որ դատարանների՝ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունն առկա է միայն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործի դեպքում, ավելին՝ հիշյալ իրավունքը կարող է իրացվել համապատասխան գործով վարույթն սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը:

3. Սույն գործի պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2020թ. որոշմամբ մերժվել է ամբաստանյալի

միջնորդությունը՝ քրեական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:

Հիշյալ որոշման դեմ ամբաստանյալը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը 20.11.2020թ. մակագրվել է վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա. Մնացականյանին:

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից 08.12.2020թ. կայացվել է «Գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու և դատական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշում:

Ելնելով դիմումի և թիվ ԵԴ/0496/01/2020 դատական գործի նյութերի ուսումնասիրության արդյունքներից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չէ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վերոնշյալից հետևում է, որ սույն գործով դիմումը ներկայացվել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունված չլինելու պայմաններում, և հիմք ընդունելով օրենսդրական այն պահանջը, որ դատարանները կարող են դիմել Սահմանադրական դատարան **իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով**, մասնավորապես՝ գործով վարույթը սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական գործում առկա չէ որևէ ապացույց, որ սույն գործով կայացվել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, որպիսի որոշման հիմքով և գործը գտնվում է վերաքննիչ քրեական դատարանի վարույթում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

29 դեկտեմբերի 2020 թվականի
ՍԴԱՈ-245



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ